

կան: Յետոյ հասնելով Փարիզ զմայլումով կը նկարագրէ անոր Մայր եկեղեցին՝ Notre Dame. բայց զարմանալի է որ բոլորովին կը լռէ Լեոն վերջինի մասին, որ շուրջ դար մ'առաջ (1493) վարձանելով նոյն քաղաքին մէջ՝ թաղուած էր Կեղեստինեանց եկեղեցոյն մէջ և հոն ալ կը մնար, ինչպէս յայտնի է՝ մինչև Քրանսական մեծ Յեղափոխութիւնը, երբ ցրուեցին իր ածիւնները, և դամբանը ժամանակ մը թանգարանի մը զարդն ըլլալէն յետոյ հուսկ զեանդուեցաւ Փարիզի մօտ Ս. Գիոնեսիոս քաղաքի տաճարին մէջ՝ թագաւորական ուրիշ դամբաններու հետ:

Հոս կը մնայ 13 օր և կը թուի թէ ասկից Պոլիս վերադառնալով իր ուղեկիցը՝ ինք մինակ կ'անցի թուռ, և Շաթէլլէրոյ, Փուլթիէ, յետոյ Ալլանտեանի ափերը քերելով կը հասնի Կասքոնիա, կ'անցնի Պայոնէն և վերջապէս կը մտնէ Պասքեան երկիրը՝ Սպանիոյ հիւսիսային շրջանը, զոր ձկնակերաց աշխարհ կ'անուանէ:

Մարտիրոս եպս. ինչպէս կը տեսնենք իր ուղեգրութեան մէջ երկար կը թափառի Սպանիական աշխարհին բոլոր ծովեզերեայ մասերը հիւսիսէն արեւմուտք, և հարաւէն Արեւելք. և այդ քաղաքներու յիշատակներուն վրայ է որ կը ծանրանայ և յատկապէս ուխտատեղիներուն՝ որոնք իր բարեպաշտութեան յագուրդ կու տան: Միանգամայն կը նկարագրէ տեղական ժողովրդեան՝ մարդասիրութիւնը հանդէպ իրեն՝ իրրեւ եկեղեցական և ուխտաւոր:

Գէպի Ս. Յակոբի սրբավայրը դիմելու համար կ'անցնի հիւսիսային ծովեզերեայ քաղաքներէն. այսպէս նախ Ս. Սերաստիանոս, ուր մեծ սէր և հոգածութիւն կը գտնէ Մարտիրոս եպիսկոպոս սակայն ոչ գեղեցիկ մարդեր. «և այն քաղաքին սիրուն մարդ չտեսայ»:

Դարձեալ ծովափը քերելով կ'երթայ Փորթուկալէթէ, Սանթանտէր, Սանթիլլանա, Ս. Վինչենցիոս, Սան Սալվատոր, Պեթանծոս և հուսկ Կալիցիա (Galicia) գաւառին մէջ Սանթիակոյ աի Գովփոսթեա՝ ուր Մարտիրոս եպս. իր ուխտը կը կատարէ Ս. Յակոբի գերեզմանին վրայ մեծ բարեպաշտութեամբ «և բազում արտասուօք»: Հոն կը մնայ 84 օր՝ նկարագրելով պատմական սրբավայրը իր բոլոր հարստութեամբ. «և զայլ ամբաւ վայելչութիւն, ո՞վ կարէ պատմել»: Կը տեսնուի մտադիր էր դեռ երկար կենալ հոն, սակայն կ'ըսէ թէ «այլ չի կարացի կենալ, թանկութիւն էր». ու կ'անցնի Ֆինիսթերէ, յետոյ կը հանդիպի Պիլպոսյ, Կուեթարիա, և ամէնուրեք դիւրութիւն և պատիւ կը գտնէ՝ շնորհիւ Ս. Պապի յանձնարարականին:

Մարտիրոս եպս. բախտը կ'ունենայ աշխարհախոյզ ընկերութեան մը նաւով — յիշենք օր Գոլոմպոսի Ամբրիկեան զիւտի շրջանն է — Ալլանտեանէն մտնել միջերկրական՝ 68 օր վտանգաւոր ուղեւորութենէ մը վերջ: Պահ մը ցամաքով կ'այցելէ Կուատալուրի Տիրամօր ուխտատեղին, յետոյ Սիւրիա ուր կը տեսնէ Խաթունը՝ Իզապելլա թագուհին և նորէն կը նաւէ և նորէն ցամաքով Կրանաթայի և Մուրչիայի կողմերէն կ'անցնի Եսէն, Պաեզա, Ուպեթա, Ս. Ստեփանոս, Պուրդոս, Չինչիլիա, Ալմանտէզա, Ֆալատէզ և վերջապէս 15 օրէն վալենցիա, ապա Պարչիոնա. յետոյ Քաթալոնիա կը մտնէ ու Փերփինեան և Ֆրանսայէն Իտալիա անցնելով Միլանի դքսութեան մէջ, կ'այցելէ նախ Ֆրուկարոյ՝ զոր ինք Ֆրկալաւ կը կոչէ, յետոյ Ազեքսանդրիա, ուսկից կ'իջնէ ճենովա՝ դիտում ունենալով հայրենիք դառնալ: Սակայն խռոված ծովը կը փոխէ իր ծրագիրը, և նա ետ դառնալով՝ ցամաքէն կ'ուղեւորի գէպի Օրվիեթոյ, Մոնթէֆրասքոնէ, Վիթերպոյ և վերջապէս 1490ի Փետր. 20ին նորէն Հոռմ կը հասնի «առ ոտս գլխաւոր Առաքելոցն», ուսկից կ'երթայ Սանթամարիա և նաւ առնելով կը վերադառնայ հայրենիք ուխտաւորի զոհութեամբ: